

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

III

ՇԻՐՎԱՆԶԱԴԻՔԻ ՆԱՄԱԿԸ ՊՈԼՍԻ ՄԱՄՈՒԼԻՒՆ

Նամակ Խմբագրութեան

Մեր երիտասարդ քանքարաւոր բանաստեղծ Ա. - Եարձանեանի բարութեան չնորհովն է, որ այսօր Պօլսից ստացայ «Արեւելք»ի, «Ժամանակ»ի եւ «Մանզումէի էֆքեար»ի այն համարները, ուր զետեղուած են քննական յօդուածներ Արէւեան-Արմէնեան թատերախրմբի առաջին ներկայացման եւ իմ «Պատուի Համար» պիեսի մասին :

Խորապէս զգացուած եմ այն ջերմ ընդունելութիւնից, որին արժանացել է իմ համեստ բեմական երկը Կ. Պօլսի հայ հասարակութեան եւ մամուլի կողմից :

Մինդամայն ողեւորութեամբ կարդացի յայտնի վիպասան Գրիգոր Զոհրաբի նուրբ, խորը հողերանական յօդուածը, 52-րդ թիկ-նաթոռի, ալ. Արամ Անտոնեանի եւ ալ. Գ. Թ.-ի խանդավառ տողերը, պատկառելի գերասան Մնակեանի հմուտ գիտողութիւնները եւ հումօրիստ Ալիբիարի սրամիս ակնարկները :

Կարգացի եւ զգացի, որ իմ գրիչը չափազանց տկար է մի քանի սողով արտայայտելու ուրախութեանս եւ երախտազիտութեանս չափը Պօլսի մամուլին, քննադատներին եւ մանաւանդ հասարակութեան :

Անձամբ ինձ համար թանդ է այդ գնահատութիւնը այն պատճառով, որ ես միշտ մեր տաճկահայ եղբայրներին համարել եմ եւրոպացիներ իրանց զբականական - զեղարուեստական անաշառ պահանջների եւ մանաւանդ քննադատական վայելուչ եւ կիրթ եղանակի համար : Զեղնում է որ նկատվում է Փրանսիացու նրբազգացութիւնը եւ զերմանացու անկախութիւնը անհատական միտումներից եւ նախապաշտումներից : Եթզանիկ պիտի համարի իրան Արէւեան-Արմէնեան խոմբը, որ այսօր մի այդպիսի ըրջանումն է : «Ես կը վերադարձնեմ Բագուի Կուլտուրական Միութեանը ստացածս նը-

պաստը եւ չուտ չեմ վերադառնալ կովկաս», գրում է ինձ իւր վեր-
ջին նամակնամ Յով. Արէլեանը :

Հասկանալի է : Գրականութիւն, թատրոն, գեղարուեստ էն
նուրբ ծաղիկներն են, որոնք պահանջում են ամենաքնքոյշ վեր-
բերմունք : Մի կովկաս հպում, լինի այն նախանձ թէ անկրթութիւն,
կարող է թառամեցնել նրանց : Եւ ես անսահման ուրախ եմ, որ մեր
տաճկահայ եղբայրները այդչափ նրբազդաց են արտիստի եւ գրադէ-
տի, թատրոնի եւ գրականութեան անձնասիրութեան նկատմամբ :
Միայն այդպիսի մի խրախուսիչ շրջանում կարող է աղաս չունչ
քաշել գեղեցիկն ծառայողը : Այս հիման վրայ ես թոյլ եմ
տալիս ինձ ամբողջ հոգով բողոքելու պ . Գրիգոր Զոհրաբի հետեւ-
եալ տողերի դէմ .

« Յաւեցայ միայն, որ սուսահայերը թատերական ասպարէզին
վրայ ալ գերզանցութիւնը խլեցին մեր ձեռքէն, անիրաւնե՛րը » :

Ոչ, անիրաւը գուրք էք, յարգելի արուեստակից : Ռուսահայերը
չեն խլել եւ չեն կարող խլել ձեզնից ոչ մի գերզանցութիւն : Եթէ
տաճկահայը իւր կեանքի սոսկալի օրերին կարողացել է տալ մեզ
մի շարք նշանաւոր տաղանդներ, որոնցով հիանում ենք մենք ուր-
սահայերս եւ որոնց մէջ դուք առաջնակարդ տեղ ունիք, ապա կա-
րելի է երեւակայել, թէ այսուհետեւ նրա հոգին, որ այժմ աղաս է
կապանքներից, որպիսի հոկայական թոիչքներ պիտի գործի : Զէ՞
որ Պօլիսն էր, որ տուեց ոսւսահայ թատրոնի լաւագոյն զարդերը
եւ սուաջին ինքնուրոյն բեմական երկերը . . . : Եւ ես համոզուած
եմ, որ շատ մօտիկ է այն ժամանակը . Երբ Պօլիսը կուղարկի սու-
սահային փոխադարձ այցելութեան աւելի ընտիր խում, աւելի ըն-
տիր բեմական ինքնուրոյն երկերով . . .

Բարի եղէք ընդունելու յարգանքներիս հաւաստին

Պարիզ

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

22 Դեկտեմբեր 1908 թ.

IV

ՇԻՐՎԱՆԶԱԴԵԴԻ ՆԱՄԱԿԸ Պ. Ա. ԱՆՏՈՆԵԱՆԻՆ

Սիրելի արհեստակից !

Պատիւ ունեցայ ստանալ Զեր երկու նամակը : Առաջին նամակի
առթիւ դժւարանում եմ Զեղ գոհացում տալ, վասն զի, դժբախտա-

բար, չունիմ Զեր պահանջած լուսանկարները։ Միակ լուսանկարս անցեալ տարի Պարիզ գուրս բերուածն է, որ տպուեց «Գեղունու» վերջին թւի մէջ եւ որի քլիշէն մեր սիրելի Տ. Կամսարականի քով է։ Այսօր զբացի նրան, որ քլիշէն ուղարկէ Զեղ։

Անչափ ուրախացրեց ինձ Զեր երկրորդ նամակը։ Տաճկահայացչափ նշանաւոր գրողների ուշադրութիւնը դէպի նւասսու ինձ համար մի անդնահատելի պսակ է։ Սպասում եմ անհամբեր ձեր ժողովածուին եւ ոչ միայն ես, այլ եւ շատ շատերը։ Եթէ կարողանայիք մինչեւ այժմ լոյս ընծայել, մեծ քանակութեամբ վաճառուած կը լինէր, դոնէ Կովկասում։ Բոլոր զրավաճառները հետաքրքրւած են։ Աշխատեցէք դոնէ մինչեւ յորելեանի օրը հասցնել։

Անտիոք բան չունիմ ուղարկելու։ Հոգեկանս էլ այնքան զէշ է, որ զրիչ շարժել չը զիտեմ։ Բացի այդ, շատ աւելի զնահատելի կը լինի «Ժողովածուն», եթէ լոյս տեսնի առանց իմ որ եւ է մասնակցութեան։ Իմ ձայնը ձեր սքանչելի համերդի մէջ կարող է հնչալ դիսօնանս։

Կը լինդրէի, որ «Մշակի» եւ առհասարակ իմ հակառակորդների մասին բան չը լինէր «Ժողովածուի» մէջ։ Մի այդպիսի սքանչելի զրականական երկ թողէք մնայ իր արժանի բարձրութեան վրայ։ 18 նշանաւոր տաճկահայ հեղինակների միաձայն համակրանքը դէպի ինձ կարօտ չէ որ եւ է բնակուի, ես անհաճման պարծենում եմ ձեր ուշադրութեամբ։ Աւելի մեծ պատիժ չէին կարող սպասել իմ հակառակորդները։

Իմ զրգերը կ. Պոլսից շատ են պահանջում, բայց պահանջում են առանց զրամի։ Ահա 15 տարի է, որ ես կօժիսիոնով ոչ մի գըրավաճառանոցի գիրք չեմ տալիս։ Շատ եմ կորցրել, շատ։ Այժմ ես զիջում եմ անզամ մինչեւ 30 % արժէքից, բայց կանիփի զրամով։ Պալենցն էլ ինդրել էր, մերժեցի։ Արդ, եթէ Զեր յիշած զրավաճառը պէտք ունի իմ երկերին, թող պահանջի որբան կամենում է, ես կը զեղջեմ 35 %, ճանապարհի ծախքն էլ ինձ վրայ վերցընելով։

Յարդանքներս հաղորդեցէք մեր այն րուր արհեստակիցներին, որոնք ինձ պատիւ են արել «Ժողովածուին» մասնակցելով։

Սիրակիր բարեւներով

Շիրվանջընի

V

ՇիրվանջԱԴԴէի ՆԱՄԱԿԸ Պ. Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻՆ

2 Ապրիլ, 1911, Թիֆլիս.

Սիրելի Տիգրան

Ահաւասիկ ուղարկում եմ մի քանի տող ոսկէ մատեանումը տեղաւորելու համար։ Յուսով՝ եմ, որ անշնորհքութեանս չատ էլ խիստ չես վերաբերել։ Ո՞ւր է, որ քո չափ պերճագիր լինէի։ Նամակիս վերջում յիշւած անունները ըստ արժանաւորութեան տեղաւորելը քեզ եմ թողնում։ Հարցրու Անտօնեանին, եթէ անունները մոռացել եմ, թող մտցնի։ Քո յօդուածը «Արամբիի» մասին յիշում եմ, որ «Արեւելքումն» էր։ Այսպէս է։ Եթէ ոչ - փոխիր։

Յանձնաժողովը կուղարկէ քեզ քանի օրինակ հրաւէր յորելեանի, հասցէները նրան յայտնի են, ուստի բարի եղիր 19 գրականների անունները գրել եւ ուղարկել իրանց փոստով։ Սակայն այս մասին կը գրէ քեզ պ. Մելիքեանը։

Անտօնեանին շնորհակալական զրել եմ վաղուց։

Յարգանքներս ամուսնոյդ։

ՔՈ ՇԻՐՎԱՆ

VI

14/27 Մայիսի 1911 Թիֆլիս։

Յարգելի Պրն. Անտօնեան

Մայիսի 1-ին գրած Զեր նամակն ստացայ եւ իսկոյն եւ եթ խօսեցի Թումանեանի հետ։ Նա մեղաւոր ճանաչեց իրան, որ չի պատասխանել Զեր նամակներին, բայց ասաց, որ օրի վրայ սպասում է «Հորիզոնի» գործերի կարգադրելուն որպէս զի պատասխանէ գրամով։ Իսկ գործերը տակաւին կաղմակերպման վիճակի մէջ են եւ այս օրերս ստիպողաբար պիտի վերջանան, վասն զի Մելիքեան ամսոյս վերջին գնում է արտասահման։ Առաջիկայ շաբաթ դրամարկղը փող կը մտնէ, եւ առաջինների թւում դուք եւս կը ըստանաք Զեր վարձը։ Անհանգստանալու եւ վշտանալու հիմք ունիք,

բայց համբերեցէք մի քանի օր եւս, ինչպէս համբերում են միւս աշխատակիցները։ Աղահովութեան լուրը ճիշդ է։ Ինքը պ. Մելիք-եան տալիս է 15,000 ր. խոստանալով գտնել 10,000 ր։ Միւս հը-րատարակիչները տալիս են 15,000, խոստանալով գտնել նոյնպէս 10,000 ր. որպէս զի լրացնեն 50,000 ր։ Մելիքեանը պայման է դը-րել, որ «Հորիզոնի» զեկը լինի չորս գրողներիս ձեռքում՝ Աղայեա-նի, Թուղթանանի, Լէօն և իմ եւ այս պայմանով է միայն գումարը տալիս։ Հետեւարար, ես մնում եմ աշխատակից եւ մէկը խմբադիր-ներից – առղավճարով թէ ամսականով – այդ յայտնի չէ տակաւին։

Խաժակի գրածը մեզ չը զարմացրեց։ Նա կարող էր աւելի վատ հայհոյել միզ, որովհետեւ «Հորիզոնի» խմբադրութիւնը նրան դուրս է վանաել, հասկացնելով, որ նա այլեւս ոտ չը պիտի դնի այնուեղ։ Դա մի անսպասաւան է։ Գոյյա անձնաւորութիւն է, քիչ մը էլ յի-մար։ Մի ժամանակ (1905-ից մինչեւ 1909 թ.) այդ մարդիկ ասպա-րէզի տէրեն էին, այժմ քշել են . . . եւ ճարահատեալ անկիւննե-րից հատ-հատ փամփուշտներ են արձակում։ Բայց անզօր են եւ խեղճ։ Զարժէ նրանց արհամարհանքի անդամ արժանացնել։

Յորելեանիս մասին տեղեկութիւններ էք հարցնոնւմ։ Ահա ինչո՞ր գիտեմ։ Թիֆլիսում տօնուելու է 22 Մայիսի (Յ Յունիսի) երեկո-յեան թարառում։ Այդ երեկոյ կը լինի թեթեւ ներկայացում, յե-տոյ ազօթէօդ, չնորհաւորումներ, ուղերձներ եւ այլն։ Հետեւեալ օրը կը կայանայ այդիներում ճաշկերոյթ։ Նոյն օրը գիշերը պիտի ուղեւորւեմ Բագու։ Յաջորդ երեկոյ Բաղւում կլինի նոյն հանդէսը, ասպա հետեւեալ օրը բանկէ։ Մի օր կը հանգստանամ, յետոյ կը վե-րադառնամ Թիֆլիս, Հաւլարբար կոչուած հայաբնակ մասը քաղաքի որոշել է առանձին տօնել ամսոյս 30ին։ Կովկասի բոլոր քաղաքներում եւ աւաններում տօնել է կամ տօնում է։ Բարոյական կողմից շատ գոհ եմ, ինչ կը լինի նիւթականը – դեռ չը գիտեմ։

Այս բոլորը գրեցի Զեղ բարեկամարար, ինդրեմ մամուլին չը տաք։ Զեր հատորը շատ ուշացաւ։ Ես Յունիսի 10-12 ին գնալու եմ ամբարանոց ընտանիքիս հետ։ Հասցէս կը տամ, այսոեղ կուղարէք։

Մի դադարէք, շարունակեցէք թղթակցէլ «Հորիզոնին», վստահ եղէք, որ Զեր վարձը կը ստանաք։ Շնորհակալութիւն ձեր յօդուա-ծի համար հատորի վերաբերմամբ։ Հիանալի էլ։ Զեր նամակները կարգացւում են մեծ հետաքրքրութեամբ։

Միրալիր բարեւներով,
Շիրվանջանի

Յ. Գ. Եթէ կարելի է հատորից կուղարէք ինձ 100 օր։ պայ-մանով միայն, որ փոխարէնը ստանաք իմ գրքերից տեղւոյդ գրա-

վաճառներին տալու համար, որ ծախսն յօդուա հատորի հրատա-
րակութեան : Եթէ այս պայմանը հաճելի է Ձեզ, կրնաք 200 օր . ու-
ղարկել, դարձեալ փոխարէնը իմ գրքերն ստանալով :

VII

ՇԻՐՎԱՆԶԱԴԻՔԻ ՆԱՄԱԿԸ Պ. Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻՆ

Սիրելի բարեկամ

Տիգրան Կամսարական

Պոլսարնակ մի բարեկամիս մասնաւոր նամակից տեղեկացայ,
որ իմ թրքահայ եղբայրակիցները մասպիր են հրատարակել մի
ժողովածու, որ ամբողջովին պիտի նւիրուած լինի իմ գրական ե-
րեսնամեայ գործունէութեանը :

Հրատարակութեան նախաճենողն ու զեկավարը գու ևս : Բո-
լեկամս իւր նամակում թւում է այն մեծապայչ հեղինակների ա-
նունները, որոնք սիրայօժար բարեհաճել են մասնակցել հրատա-
րակելիք մատեանում :

Տասնեւիննը խոչըրագոյն գրական գէմքեր - թրքահայ ժամա-
նակակից գեղեցիկ գրականութեան բոլոր ներկայացուցիչները :

Մի այդուհի անսպասելի եւ տնդնահատելի բարեկամական ցոյց
քու եւ քո ընկերների կողմից անսահման ուրախացնելով եւ յուզելով
հանդերձ ձգում է ինձ անսուելի նեղ գրութեան մէջ : Ես շատ եւ շատ
հեռու եմ, իմ գրական գործունէութիւնը այդ անսուել բարձր պատ-
րի արժանի համարելու մտքից : Հաւատա, սիրելի բարեկամ, որ
կեղծ համեստութեան զգացումը չէ, որ ինձ թելադրում է այս
խուքերը, այլ ինքն անկեղծութիւնը, որին դաւաճանելը քաղաքա-
կըրթութեան վկայական համարողներից չէմ :

Հետեւաբար թոյլ տուր ինձ, սիրելի բարեկամ, կանխաւ ասե-
լու, որ ձեր անդնահատելի նէէրն ընդունելու եմ ոչ իրեւ անձնա-
կան պարզեւ, այլ իբրեւ սիրոյ եւ յարդանքի մի ցոյց սուսահայ գը-
րականութեանը իր թրքահայ քըոջից :

Ինքն ըստ ինքեան արդէն մէծ պատիւ է ինձ համար, որ ներկայ
գեպում ես պիտի լինեմ միջնորդ փոխադարձ բարեկամութեան ա-
րեւմտահայ եւ արեւելահայ մատառը ականութիւնների մէջ : Եւ ան-
սահման պիտի պարձենամ, որ թրքահայի կապանքները խորտակ-
ւելուց յետոյ առաջին ինձ է վիճակում այդ բարձր գերը գրակա-
նութեան ասպարիզում :

Այս տեսակէտից միայն յայտնելով քեզ եւ քո տասնուիննը ըն-
կերներին ջերմ երախտագիտութիւնս, համարձակում եմ ուսահայ

զրականութեան կողմից մատուցանել խորին շնորհակալութիւն իւր առաջ քրոջը :

Ինչ վերաբերում է իմ անձնականին, ես վաղուց արդէն բարոյալիս վարձատրւած եմ համարում ինձ իմ թրքահայ եղբայրակիցներից :

Իրեւ ոռոսահայ գեղեցիկ գրականութեան մի համեստ մշակ և թէ կեանքումս ունեցել եմ երջանիկ յիշատակներ, որոնք գինովցը րել են ինձ, կարող եմ համարձակօրէն ասել, որ նրանց խոշորագոյն մասը պարտական եմ իմ թրքահայ եղբայրակիցներին :

Ներիր, սիրելի բարեկամս, որ այստեղ նախ եւ առաջ պիտի շօշափեմ քո համեստութեան զգացումը։ Դու էիր, Տիգրան, որ սրանից մօտ քառորդ գար առաջ խրախուսեցիր իմ առաջին թոյլ քայլերը գրական ասպարիզում, գեղարւեստագէտիդ ոքանչելի ոճով դրւատելով իմ «Արամբին» «Արեւելքի» էջերում։ Երբէ՛ք, երբէք չեմ մոռանալ այդ խրախուսանքը, որ բջինում էր «Վարժապետի ալ-ջիկ» քանքարաւոր վէպի պատահի հեղինակիդ անկեղծ, անկաշոտ, վարվոռն հոգու եւ կրակոտ սրտի խորքերից։

Այնուհետեւ ես արժանացայ թրքահայ մամուլի եւ ընթերցողների շոյիչ ուշադրութեանը։ Եւ եթէ իմ գրական ճակատագիրը ուրոշել կշեռքի մէ թեւի վրայ սկզբից եւ եթ ծանրացած էր ոռոսահայ մամուլի չկամութիւնը, միւսի վրայ համարձակօրէն բարձրացու թրքահայ եղբայրակիցներիս անկեղծ համակրանքը։ Եւ այդ մանաւանդ թանգ էր ինձ համար այն պատճառով, որ Պօլիսը աւելի մօտիկ է Եւրոպային, քան Թիֆլիսը . . . : Եւ այժմ երբ իմ ուսերը յոզնել են երեսնամեայ տնընդհատ տառապանքներից, խորին հաճոյքով եւ երախտաղիտութեամբ եմ մտարերում այն փրկարար վայրկեանները, որ պարզեւել են ինձ իմ թրքահայ եղբայրակիցները։

Մնցան տարիներ, տիսուր տարիներ, եւ ես չէի մոռացում ձեր կողմից, չը նայելով ձեր զաժամ քաղաքական կացութեանը, երբ կախաղանի արժանի յանցանք էր համարում կարմիր Սուլթանը ոռոսահայ կեանքի եւ գրականութեան մասին խօսելը թրքահայ լուրագիներում։

Բայց ահա վչեց, վերջապէս, աղատութեան հովը, ծանր մըղձաւանջն անցաւ, թրքահայ կեանքից ընկան շղթաները։ Մտաւորականութիւնը չունէ առաւ եւ մէկն առաջիններից ոռոսահայ հեղինակների մէջ, որոնք արժանացան ձեր ողեւորմանը, բաղդ ունեցայ լինելու ես։ Պարիդ էի, երբ ստացայ լրագրների մի մեծ կապոց։ Երջանիկ

վայրկեաններ : Այն ի՞նչ ողեւորութիւն էր, որ օտարութեան մէջ պաշարեց ինձ, երբ բաց արի այդ նւիշական կասլոցը և կարգացի Զոհրաբի, Հրանտի, Արտմ Անտօնեանի, Օտեանի, Զիվթէ-Մարտի, Մելքոն Կիւրճեանի, Երուխանի, Պարթեւանի, Ալփիարի և այլ թրքահայ խոչոր դէմքերի յուզիչ յօդուածները իմ բնմական երկերի մասին :

Այն երկերի, որոնց վերաբերմամբ այստեղ, Թիֆլիսում հայ հասարակութիւնը ունելիքով էր դուրս բերել ոռւսահայ լրադրների բերանից մի քանի ներողամիտ խօսքեր :

Իսկ այստեղ, Պարիզում, վաղուց արդէն ես երախտապարտ էի մեր բարեկամ նրբամիտ բանաստեղծ և ընտիր ճաշակի տէր Արշակ Զօբաննեանի խրախուսանքներին :

Ահա այն արբեցուցիչ վայրկեանները, որոնց ես պարտական ևմ իմ թրքահայ եղբայրակիցներին :

Այժմ ձեւ երկար տարիների սէրը դէպի ոռւսահայ գրականութիւնը ընդհանրապէս և դէպի ինձ մասնաւորապէս ամփոփում էք մի մատեանի մէջ, որ կը լինի մէկը լաւագոյն վարձարութիւններից իմ երեսնամեայ տառապանքների :

ՔՈ ՇԻՐՎԱՆՉԱԴԱՒԵ

